Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում մեկնարկում է վարպետաց դասերի շարք, որի «Գեշտալտ մոտեցումը սպորտում» թեմայով առաջին դասը տեղի կունենա նոյեմբերի 19-ին, ժամը 14:15-ին (68 լսարանում): Դասի ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու գեշտալտ մոտեցմանը, սպորտային աշխարհում կոնտակտի երևույթին և մարզիկ-մարզիչ փոխհարաբերություններում ֆենոմենոլոգիայի դրսևորումներին:

Մասնակիցների համար կկազմակերպվի նաև գործնական պարապմունք՝ իրավիճակի գիտակցման գործնական վարժանքների ցուցադրմամբ: Դասընթացի տևողությունը 3 ժամ է (4 ակադեմիական ժամ): Վարպետաց դասերը նախատեսված են մարզիչների, սպորտային հոգեբանների, հոգեթերապևտների, առողջարարական և մարզչական կրթություն իրականացնող դասախոսների համար:

Դասընթացը կվարի գեշտալտ թերապիայի և ընտանեկան հոգեթերապիայի եվրոպական ասոցիացիայի անդամ, կառավարման հոգեբան, հոգեթերապևտ Լաուրա Պետրոսյանը (http://linkedin.com/in/laura-petrosyan-33550331/):

Մասնակիցների տեղերը սահմանափակ են (20 մասնակից), դիմելու վերջնաժամկետը նոյեմբերի 15-ն է:

Մանրամասները՝ (099) 27-07-47 հեռախոսահամարով: